

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 5

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

27.02.2017թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Ա. Դարբինյանը - մարզպետի տեղակալ
- Տ. Բադոյանը - մարզպետի տեղակալ
- Հ. Թադևոսյանը - մարզպետի տեղակալ
- Ն. Սարգսյանը - աշխատակազմի ղեկավար
- Վ. Խաչատրյանը - աշխատակազմի ղեկավարի տեղակալ
- Հ. Պապոյանը, Ս. Լամբարյանը, Մ. Սայադյանը, Ա.Ջանազյանը, Դ. Մանուչարյանը, Գ. Հակոբյանը, Ա. Օհանյանը, Լ. Բերոյանը, Ա. Սահակյանը, Ս. Ղուբաթյանը, Ա. Աղլոյանը, Վ. Դոխոյանը, Ս. Խեչումյանը, Հ. Մկրտչյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Լ. Ապլանյանը - մարզպետի խորհրդական
- Ա. Մանուկյան - մարզպետի խորհրդական
- Ա. Սարգսյանը - մարզպետի օգնական
- Տ. Էվինյանը - մարզպետի օգնական

Օր ա կ ա ր գ ու մ`

1. ա/ Լոռու մարզպետի 2016թ. հաշվետվության մասին
բ/ Մարտի 8-ի միջոցառումների մասին
գ/ Ապրիլյան պատերազմի զոհերի և վիրավորների ընտանիքներին տրվող օգնությունների մասին
/Ա.Նալբանդյան/
2. ՀՀ համապետական ընտրությունների կազմակերպման նախապատրաստական աշխատանքների ընթացքի մասին
/Զեկ. Ն. Սարգսյան/
3. Համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման աշխատանքների մասին
/ Զեկ. Հ.Պապոյան/
4. ա/ Առարկայական օլիմպիադաների մարզային փուլի մասին
բ/ Համայնքների երեխաների մարզպետարան այցի մասին
/ Զեկ. Մ. Սայադյան/
5. Գարնանային գյուղատնտեսական նախապատրաստական աշխատանքների մասին
/ Զեկ. Գ.Հակոբյան/
6. Այլ հարցեր:

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց`

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա. Դարբինյանին, Հ. Թադևոսյանին, Տ. Բադոյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ. Մանուչարյանին`

Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել Լոռու մարզի համայնքների կողմից սեփական եկամուտների հավաքագրման պլանային ցուցանիշներն ապահովելու ուղղությամբ:

2. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Վ. Խաչատրյանին, աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Ս. Ղուբայանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ս. Լամբարյանին`

Կազմակերպել և իրականացնել ապրիլյան քառօրյա պատերազմի ժամանակ զոհվածների և վիրավորների ընտանիքների կարիքների գնահատում և ներկայացնել առաջարկություններ նրանց ընտանիքներին ֆինանսական աջակցություն ցուցաբերելու նպատակով:

3. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մ.Սայադյանին`

ա/ Ներկայացնել առաջարկություններ Մարտի 8-ի միջոցառումների անցկացման ձևաչափի վերաբերյալ.

/ ժամկետ` 1 շաբաթ /

բ/ Համեմատական վերլուծություն իրականացնել մարզի դպրոցների կողմից առարկայական օլիմպիադաների կազմակերպման և մասնակցության վերաբերյալ և ներկայացնել ամփոփ տեղեկատվություն ըստ տարիների:

4. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Գ. Հակոբյանին`

Անհրաժեշտ հսկողություն սահմանել համայնքների կողմից գարնանային գյուղատնտեսական աշխատանքների նախապատրաստման և իրականացման նկատմամբ ու միջոցներ ձեռնարկել համայնքների կողմից սերմացուի և պարարտանյութի գումարների կանխիկ հավաքագրման ու վճարումները սահմանված ժամկետներում իրականացնելու ուղղությամբ:

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ



Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Արձ. Ս.Մակարյան

Հեռ. 0322/4- 32- 99/